Պայմանագիր

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Երևան քաղաքում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) և Երևան քաղաքում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի «Միջազգային հարաբերություններ» ֆակուլտետը (այսուհետ՝ ֆակուլտետ),

հաշվի առնելով ընդհանուր հանրակրթական և մասնագիտական դասընթացներից ստացված գիտելիքների ամրապնդման, տվյալ մասնագիտության շրջանակներում մասնագիտական գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման կարևորությունը,

նպատակ ունենալով ամրապնդել ֆակուլտետի ուսանողների արտաքին քաղաքականության ոլորտում հետազոտություններ և վերլուծություններ իրականացնելու հմտությունները,

համաձայնեցին կնքել սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Համագործակցության նպատակը

1.1 Սույն պայմանագրի շրջանակներում նախատեսվող համագործակցության նպատակն է՝ ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների ամրապնդումը և զարգացումը, ինչպես նաև արտադրական պրակտիկայի միջոցով մասնագիտության կրթական ծրագրի մեջ ներառված դասընթացներին ստացած գիտելիքների խորացումը, մասնագիտության կրթական ծրագրերում նշված անհրաժեշտ գործնական հմտություններ և կարողություններ ձեռք բերելը:

2. Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկայի կազմակերպումը

2.1 Պրակտիկաների ծրագրերը մշակվում են ուսումնական հաստատության կողմից, անհրաժեշտության դեպքում ծրագրերը համաձայնեցվում են նախարարության հետ:

2.2 Պրակտիկայի ծրագրերը պետք է համապատասխանեն ուսանողի որակավորումների պահանջներին՝ հաշվի առնելով մասնագիտությունը:

2.3 Յուրաքանչյուր պրակտիկայի ծրագիր ունի առավելագույնը 8 շաբաթ տևողություն, նախարարությունում օրական առնվազն երեք ժամ ներկայությամբ:

Պրակտիկայի կազմակերպման նպատակով ֆակուլտետը.

2.4 Պրակտիկայի մեկնարկից առնվազն երկու շաբաթ առաջ գրավոր նախարարությանն է ներկայացնում պրակտիկայի մասնակից ուսանողների ցուցակը (առավելագույնը վեց ուսանող) և նախատեսվող պրակտիկայի սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն:

2.4 Տեղեկացնում է ուսանողին էթիկայի և անվտանգության պահպանման կանոններին:

2.5 Ապահովում է ուսանողների պատշաճ ներկայությունը նախարարությունում՝ պրակտիկայի ծրագրի ղեկավարների կողմից նախանշված ժամերին:

Պրակտիկայի կազմակերպման շրջանակներում նախարարությունը.

2.6 Որոշում է այն կառուցվածքային ստորաբաժանումների շրջանակը, որտեղ պետք է անցկացվի ուսանողների Պրակտիկան:

2.7 Պրակտիկա անցնող ուսանողների աշխատանքների վերահսկողությունն իրականացնում են նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը և (կամ) նրա կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարը:

2.8 Ուսանողների գործունեության, կարգապահության վերահսկման, խախտումների արձանագրման և այդ մասին ֆակուլտետին տեղեկացումն իրականացնում է նախարարության անձնակազմի կառավարման վարչությունը:

2.9 Պրակտիկայի ավարտից հետո տրամադրում է ուսանողի գրավոր բնութագիր:

Պրակտիկայի ընթացքում ուսանողը.

2.10 Պրակտիկա անցնող ուսանողն իրավասու է առնչվել/ծանոթանալ միայն այն փաստաթղթերի հետ, որոնց ցանկը սահմանում է նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը :

2.11 Պրակտիկա անցնող ուսանողները պարտավորվում են խստորեն պահպանել նախարարության աշխատանքային կարգապահական կանոնները, ճշտորեն և ժամանակին կատարել տրված հանձնարարականները:

2.12 Ամեն օր լրացնել պրակտիկայի օրագիրը՝ ելնելով պրակտիկայի ծրագրից: Գրանցումները կատարել հակիրճ, իսկ մանրամասները գրառել աշխատանքային տետրում և հաշվետվության մեջ:

3. Պրակտիկայի ավարտը և արդյունքները

3.1 Պրակտիկայի ավարտին ուսանողները պետք է ներկայացնեն գրավոր հաշվետվություն կամ վերլուծություն պրակտիկայի ղեկավարների կողմից հաստատված ծրագրի շրջանակներում իրենց հանձնարարված ուսումնասիրության առարկայի վերաբերյալ:

4. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

4.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, գործում է 1 տարի ժամկետով և կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ 1 տարի ժամկետով:

4.2 Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու առաջարկ չներկայացնելու դեպքում Պայմանագրի գործողությունը դադարում է:

5. Պայմանագրի փոփոխությունները և գործողության դադարումը

5.1 Սույն Պայմանագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ուժի մեջ են մտնում դրանց ստորագրման պահից և կազմում դրա անբաժանելի մասը:

5.2 Սույն Պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն պայմանագիրը կնքված է ք. Երևանում 2022 թվականի հունիսի «20»-ին՝ երկու հավասարազոր օրինակից:

7. Կողմերի ստորագրություններ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	**Երևան քաղաքում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ**
Բորիս Սահակյան Գլխավոր քարտուղար	Պավել Սաֆարյան Գործադիր տնօրեն